քան զնախկին չափն, և չյաւելուլ ինչ 'ի նա դէթ մատնաչափ»։ Եւ յետ այնորիկ գրեալ հարցին ցԲդեշխն Երուսաղէմի՝ թէ արդարեւ հնացեա՞լ իցէ գմբեթ տաճարին, և թէ պէտս ունի՞ն նորոգութեան այլ տեղիք եւ բնակարանք։ Իսկ Բդեշխն եւ Դատաւորն բազմութեամբ այլազգեաց՝ ըստ հրամանին արարին քննութիւն յայնոսիկ տեղիս՝ զոր յիշեցաք եւ յայտ արարին 'ի Դուռն։ Եւ ըստ այնմ գրեցաւ հրովարտակ Կայսերական (Խաթթի Շէրիֆ) և 'ի ձեռն Ոստիկանի և Վերատեսչի առաքեցաւ յԵրուսաղէմ, ١١٣١ (1719)։ Զայս իմացեալ Գրիգորի եւ Յովհաննու՝ դիմեցին առ Դեսպանն Գաղղիոյ, եւ եդին 'ի միջի պայման իմն այսպիսի.— 'ի նորոգել Լատինաց զմեծ եւ զփոքր գմբեթն տաճարին՝ եւ զայլ տեղիս իւրեանց, եթէ հարկադրեսցին քակել զտեղիս Հայոց, եւ կամ 'ի քակելն պատահմամբ փլանիցի կամ անկցի՝ և կամ վնաս ինչ պատահեսցի տեղեացն Հայոց՝ շինեսցեն զայնս Լատինք ըստ առաջին կերպի, և զծախսն մի՛ պահանջեսցեն 'ի Հայոց, եւ մի՛ մխեսցեն զձեռս 'ի սեպհական բաժինս նոցա, և ոչ 'ի կանթեղս, յաշտանակս և յայլ իրս, և մի՛ պատճառեսցեն նեղութիւնս ինչ միաբանից որք բնակին անդ՝ նաեւ ուխտաւորաց. զայս պայման հաճութեամբ ընկալան երկոքին կողմանքն, և հաստատեցին 'ի Դատարանին Ղալաթիոյ։

Այլ վասն նորոգութեան բաժնին Հայոց խորհէին երկոքեան 'ի միասին. զի չէր հնար թողուլ և լքանել զայն այնպէս սակս վտանգի հակառակութեանց եւ մեծամեծ վնասուց, եւ Թերեւս յափշտակութեան իրաւանց։ Եւ 'ի ձեռնարկել նոցա յայն գործ՝ պէտս ունէին բազում դրամոց, և ինքեանք կային 'ի չքաւորութեան եւ ընկղմեալ 'ի հոգս առ 'ի վճարելոյ զպարտս Երուսաղէմի։ Սակայն ապաւինեալ 'ի շնորհս Տեառն, մատուցին եւ ինքեանք գիր աղաչանաց առ Արքայն ընդ մեծամեծացն Հայոց եւ բազմութեամբ եկեղեցականաց, եւ խնդրեցին հրաման նորոգել զբաժինս Հայոց, ըստ նմանութեան երկուց ազգաց։ Եւ ընկալան զայն բազում նեղութեամբ և առաքեցին զհրովարտակն առ Հաննա վարդապետ Աթոռակալ. գրեցին և առանձին գիր յորդորական, եւ քաջալերեցին